ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

2015թ. նոյեմբերի 13 թիվ 134-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 31-Ի ԹԻՎ 70-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի << Աշտարակի Ս. Շահազիզի անվան թիվ 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի նախագահի 2015 թվականի նոյեմբերի 10-ի գրությունը **որոշում եմ**.

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2010 թվականի մայիսի 31-ի <<Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններ պետական ոչ առևտրային կազմակերպություններում հաստատության խորհուրդների կազմը հաստատելու մասին>> թիվ 70-Ա որոշմամբ հաստատված հավելվածի Աշտարակի տարածաշրջանի 2-րդ կետում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) <<Աշտարակի Ս. Շահազիզի անվան թիվ 2 հիմնական դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի կազմում <<Նարինե Դավթյան>> և <<Աշոտ Սահակյան>> բառերը փոխարինել համապատասխանաբար <<Անուշ Արամյան>> և <<Արիս Թովմասյան>> բառերով:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ